

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հերևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պարճառված վնասները գնահատող հանճնաժողովի 13.05.2013 թ. նիստի

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետ՝

Ա. Ղահրամանյանի

ՀՀ գյուղատնտեսության նախարարի
առաջին տեղակալ՝

Գ. Բաղիյանի

ՀՀ գյուղատնտեսության նախարարի
տեղակալներ՝

Ս. Գալստյանի

Ռ. Մակարյանի
Գ. Պետրոսյանի

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝

Դ. Սամսոնյանի

ՀՀ ԱԻՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական
վարչության ճգնաժամային կենտրոնի ավագ
հրահանգիչ՝

Գ. Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային
ստորաբաժանումների ղեկավարների

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 12.05.2013թ. տեղի ունեցած կարկրահարության հետևանքով ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում գյուղատնտեսությանը հասցված վնասները գնահատելու միջոցառումների մասին

/ Ա. Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ /

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանը օրակարգային հարցի առնչությամբ Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պարճառված վնասները գնահատող հանձնաժողովի նիստի մասնակիցներին տեղեկացրեց, որ 2013 թվականի մայիսի 12-ին տեղի ունեցած կարկրահարությունից էպես վնասվել են մարզի 43 գյուղական համայնքների գյուղատնտեսական մշակաբույսերը, ցանքափարածություններն ու այգիները: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ է սեղմ ժամկետում ավարտել մարզի համայնքներում կարկրահարության պարճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը ներկայացնել մարզային հանձնաժողով՝ համապատասխան ընթացք տալու նպատակով: Համայնքներում վնասների գնահատման աշխատանքների կատարման միասնականությունն ապահովելու նպատակով արդեն հանձնարարվել է ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը մշակել վնասների գնահատման համապատասխան ձևաչափ և օպերատիվ կարգով տրամադրել կարկրահարությունից տուժած համայնքների ղեկավարներին:

Օրակարգային հարցի առնչությամբ արտահայտվեց նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ Գ. Բաղդյանը, որը մասնավորապես նշեց ձեռնարկվելիք միջոցառումների օպերատիվ կազմակերպման նշանակության մասին: Նա միաժամանակ նշեց, որ իրենք մարզպետի հետ համատեղ հանդիպումներ կունենան կարկրահարությունից տուժած համայնքների բնակիչների հետ, տեղում կծանոթանան ստեղծված իրավիճակին: Նա միաժամանակ նշեց նաև, որ իրենց կողմից խորհրդարանական աջակցություն է ցուցաբերվել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը վնասների գնահատման համապատասխան ձևաչափի մշակման գործում:

Հանձնաժողովը որոշում է՝

1. Առաջարկել կարկրահարությունից տուժած համայնքների ղեկավարներին՝

ա/ համայնքային հանձնաժողովների ակտերը կազմել և մարզային հանձնաժողով ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության կողմից մշակված և տրամադրված ձևաչափին/կցվում է/ համապատասխան,

բ/սեղմ ժամկետում ավարտել մարզի համայնքներում կարկտահարության պարճառով գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատման աշխատանքները և համայնքային հանձնաժողովների կողմից համապատասխան ձևաչափով կազմված ակտերն ուղարկել մարզային հանձնաժողով՝ քննարկելու և համաձայնեցված ակտերը հանրապետական հանձնաժողով ներկայացնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝



Մ.Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝



Դ.Դավթյան